ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 273 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ 15 ՕԳՈՍՏՈՍԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 1043-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1275 -Ն ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԹԻՎ 1478-Ն ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 2323-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի 15 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1275-Ն և 2024 թվականի 19 սեպտեմբերի թիվ 1478-Ն ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» որոշումներով և հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 22-ի ակտն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի

մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 30–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի 15 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1275-Ն և 2024 թվականի 19 սեպտեմբերի թիվ 1478-Ն ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» որոշումների համաձայն՝ 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցներին պատճառված վնասների համար տրամադրել 29,201,000 /քսանինը միլիոն երկու հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն՝ ըստ հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝ 10-օրյա ժամկետում ինձ ներկայացնել տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-10-15 10:11:46 GMT+4
Հավաստագրված է EKENG-ի կողմից

ք. Իջևան
14 հոկտեմբերի 2024թ.